Օրս Շաբաթ (26 Մայիս). Էջմիածնի թապախն քանեցի ի մեր ժամս փոխանակ Մղտեսուն։

Իկ-իս Մեծահրաշի Կիրակի։ Օրս եազի եղև տօնանմային։ Եւ օրս Առաջնորդին մօտն գնացի, և յայնմ ժամուն եկին ժողովուրդն Արզրումայ քաղաքին որ աստ էին վաճառականք՝ առ Առաջնորդն թէ Վասն է՞ր ոչ թողուս զՍարգիս վարդապետն յեկեղեցիս. և նա բազում պատճառս եդ վասն նորա և ևս թուղթ հանեալ թէ Հոգևորտէրն զդա բանադրեալ է. և նոքա հաւատացեալ՝ ելեալ գնացին։ Եւ Սարգիս վարդապետն կամէր բազում ինչս առնել նմա և ոչ թողին արք ոմանք ի մէնջ առնել զայն՝ զկրակն մարելով. և նա ելեալ գնաց ի Պուրսա և անտի յաթոռն իւր յԱրզրում, որ էր առաջնորդ յայնմ նահանգի։

Բշի օրս (28 Մայիս) արք ոմանք պուլրուլթու առին ի վէզիրէն վասն չինութեան եկեղեցոյն մեր. ոչ կարացին յառաջացուցանել։

Դշի օրս (30 Մայիս) Մօճա Աւէտի փեսան եկն վաճառականութենէ և եբեր (պարտ) թէ Փիլիպպոս կաթողիկոսն վաղջանեցաւ ի Տէր Մարտի ԻԴ-ին՝ պահոց չորրորդում Շաբաթի աւուրն տօնի Ի Մանկանցն, և եդեալ են ի տեղի նորա զՅակոբ վարդապետն։

Ցունիս ամիս օր Ուրբաթ։

Եւ այդուցս (2 Յունիս) ասացին թէ Տօնանման ելանելոց է[1]), և ամենեքեան ի սէյիր գնացին ի ծովերքն և ի ծովեզրն որ յայն կոյս՝ որ ասի Ֆնտիսլի։ Յայնմ տեղւոջ ի սէֆէր գնացողացն զմի սէյիր անողքն[2]) եհար և սպանաւ. և թէ յամենայն տեղիս, թէ ի մէջ քաղաքիս և թէ ի դուրս, ոչ դնէին պահապանք՝ բազում ոճիրս գործէր ի նոցանէ մինչ երթային։ Ոչ

1) ելանոց է. 2) առողքն.